ներով։ Այս թումբի միջին մասում պատի մեջ թողած պատրհանում հանգչում են հորիզոնական դիրքով դեպի առաջ ձգվող երկու զուգահեռ և երկար (8—10 մ) ծանր գերանների գլխներ։ Նրանց հակառակ ծայրերը պառկած են արջի վրա։ Արջը լայն և կարճ, ամբողջական կամ երկու միացված կտորներից կազմված հաստ տախտակ է, որի կենտրոնում եղած ծակն ունի պտտակային հակառակ կտրվածք։ Այս ծակի միջով անցնում է պոդոսիկ՝ հաստ փայտե պտուտակը, որն իր երկաթապատ ոտքով ուղղաձիգ տնկված է հատակին նստեցրած քարե պատվանդանի մեջ և պտտվում է նրա փորվածքի մեջ։ Պոդոսիկի վրա, գետնից մարդու գոտկատեղին հավասար բարձրությամբ, հորիզոնական դիրքով ամրացված է մեջտեղը անցք ունեցող կլոր քար[91], որով պոդոսիկը կարելի է պտտեցնել և այդպիսով բարձրացնել կամ իջեցնել նրա վրա հագցրած արջն և արջի հետ երկու գերանների ծայրերը։

Սարքավորումը գործում է այսպես՝ սրահի թամբի մեջ շինված է 1,6 մ երկարությամբ և 0,60 մ լայնությամբ և նույնչափ խորությամբ քարե արկղ։ Այս օջախի՝ արկղի մեջ շար-շար դարսում են կտավհատի խմորը՝ այծի մազից պատրաստված շալերի՝ բոխչանէրի մեջ փաթաթված՝ տակից նախօրոք փռելով բարակ նիպոտնէր։ Խմորը վերևից ծածկում են ավելի հաստ ձողերով և տախտակներով, որոնք բռնում են օջախի ամբողջ ներսի տարածությունը՝ ափից ափ։ Վրայից դնում են հաստ լաշ՝ կոճղ։ Մինչ այդ բարձր պահած գերանները սկսում են իջեցնել՝ պոդոսիկն անիվի օգնությամբ պտտեցնելով և այդպիսով արջը իջեցնելով։ Գերաններն իրենց ծանրությամբ ճնշում են լաշը, որի տակ խմորը սեղմվում է և քամվում։ Ձեթը նախ անցնում է փոքրիկ ավազան և ապա այնտեղից թափվում է ավելի խորը նստեցրած կարասի մեջ։

Վարձը վճարվում էր քամած ձեթի մի մասով[92], առանց բաժին հանելու քուսպից։ Աշխատանքի միջոցին բոլոր բանվորները կերակրվում էին կտավհատի տիրոջ հաշվին։

ՕՂԻ ՔԱՇԵԼԸ

Թթենու բուծումը Զանգեզուրում ունի մի այլ նպատակ ևս, այն է՝ նրա պտուղից արաղ՝ օղի են քաշում։ Օղին զանգեզուրցու կենցաղի մեջ մտած պահանջ էր։ Մի թաս օղիով նա սկսում էր իր օրը, աղոթք անելով և օրվա հաջողությունը աստծուց հայցելով։ Հյուրի ներս մտնելուն պես նա հրամցնում էր օղին մազայավ։

Տղատիրոջ տանից աղջկա տիրոջ տունը մինչև հարսանիք մի քանի անգամ այս կամ այն օրվա առիթով շշով կամ փոքրիկ կուլիկավ նվեր էր ուղարկվում օղին։ Հարսանիքի ժամանակ հյուրերի շարքերը պտտում էր օղու գավաթը։ Օղիով խմվում էր հանգուցյալի հիշատակը և բարեմաղթվում, որ հանդերձյալ կյանքում նրա հոգին լուսավորվի։ Օղու այսպիսի դեպքերում անհրաժեշտորեն գործածվելն անշուշտ վերապրել է շատ նախնական ծիսակատարություններ՝ օղին այստեղ փոխարինել է հին նվիրական խմիչքին։

---

[91] Գետաշենում՝ կախքար։

[92] Գետաշենում 1/8-ը։